ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ

ՎԱՐԴԵՆԻՍԻ ՇՈՒՐՋՕՐՅԱ ՄԱՍՆԱԳԻՏԱՑՎԱԾ ԽՆԱՄՔԻ ԿԵՆՏՐՈՆ ՊՈԱԿ

«30» հուլիսի 2025 թ. N 7-25

Բայթ Սթեփ ՍՊԸ-ի տնօրեն՝

Կարապետ Մարգարոսյանին

(Հասցե՝ ք.Երևան, Աջափնյակ, Շիրազի փ., 28 շ., 44 բն.)

(էլ. փոստ՝ margarossian@bpark.am

Ծ Ա Ն Ո Ւ Ց Ո Ւ Մ

N *ԱՍՀՆ-ՎՇՄԽԿՊ-ԳՀԱՊՁԲ-25/01-Շ-ՐՍ* պայմանագիրը միակողմանի լուծելու մասին

Հարգելի՛ գործընկեր,

«Վարդենիսի շուրջօրյա մասնագիտացված խնամքի կենտրոն» ՊՈԱԿ-ի և Բայթ Սթեփ ՍՊԸ-ի միջև 09.01.2025 թ-ին կնքվել է «Վարդենիսի շուրջօրյա մասնագիտացված խնամքի կենտրոն» ՊՈԱԿ-ի կարիքների համար N ԱՍՀՆ-ՎՇՄԽԿՊ-ԳՀԱՊՁԲ-25/01-Շ-ՐՍ ծածկագրով շինանյութի մատակարարման պայմանագիր, որի 1.1 կետի համաձայն վաճառողը պարտավորվում է գնորդին մատակարարել Պայմանագրի անբաժանելի մաս կազմող N1 Հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված ապրանքներ:

Բայթ Սթեփ ՍՊԸ-ի կողմից խախտվել է պայմանագրով սահմանված մատակարարման ժամկետները:

Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն՝ Գնորդն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Բայթ Սթեփ ՍՊԸ-ի կողմից խախտվել է պայմանագրով սահմանված պարտավորությունը՝ գնորդը միակողմանի լուծում է պայմանագիրը, այն համարում է լուծված 1269841 (մեկ միլիոն երկու հարյուր վաթսունինը

հազար ութ հարյուր քառասունմեկ) ՀՀ դրամ չափով՝ պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով կիրառելով ՀՀ կառավարության 2017թ մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները:

«Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա) ենթակետի համաձայն մասնակիցն ընդգրկվում է Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացի տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը հրավերով կամ պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը:

Այսպիսով՝ Բայթ Սթեփ ՍՊԸ-ին տրվում է 10 աշխատանքային օր տուժանքով սահմանված պայմանագրի ապահովման 153300 /հարյուր հիսուներեք հազար երեք հարյուր/ ՀՀ դրամ և որակավորման ապահովման 229950 /երկու հարյուր քսանինը հազար ինը հարյուր հիսուն/ ՀՀ դրամ գումարները շահառուի 900158000027 հաշվի համարին փոխանցելու նպատակով: Սահմանված ժամկետում գումարները չվճարելու դեպքում, հիմնվելով «Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա) ենթակետի վրա, Պատվիրատուն Բայթ Սթեփ ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պատճառաբանված որոշումը կներկայացնի լիազոր մարմին, իսկ մատակարարի կողմից ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները կներկայացվի մատակարարի բանկ՝ նշված գումարները գանձելու նպատակով:

ՏՆՕՐԵՆ՝ Ռ. ԽԼՈՅԱՆ